Կարգապահական գործ թիվ ԿԳ-22009

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 33-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/19-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՆՈՐԱՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Լիլիթ Ղազանչյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Էմին Բեգլարյանի, Գայանե Դեմիրչյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի և Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արտակ Նորայրի Խաչատրյանին **(արտոնագիր թիվ 1435)** (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի տնօրեն՝ Վաղինակ Եղիազարյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ փաստաբան Արտակ Խաչատրյանը, 2022թ. հունվար-փետրվար ամիսների տարբեր օրերի սոցիալական ցանցերում (մասնավորապես՝ իր կողմից ստեղծված և ադմինիստրավորվող «Տուգանք» անվանմամբ խմբում) տեղադրել է անպարկեշտ մեկնաբանություններ և լուսանկարներ Բյուրոյի և Բյուրոյի ղեկավարի նկատմամբ, ինչպես նաև հասարակական վայրերում թույլ է տվել անձնական բնույթի անպարկեշտ արտահայտություններ Բյուրոյի և Բյուրոյի ղեկավարի նկատմամբ, որոնք լայնորեն տարածվել են նաև զանգվածային լրատվամիջոցներով, ինչը կասկածի տակ է դրել փաստաբանի և փաստաբանության նկատմամբ Պատվիրատուի վստահությունը և հարգանքը:

Դիմողի կողմից դիմումին կից ներկայացված նյութերից հետևում է, որ վերը նշված խմբում կատարվել է հետևյալ հրապարակումը. «Դվա վ ադնոմ:

Կենտրոնական բանկն է: նկարի մեջ նաև Բյուրոյի տնօրենն է (բայց դիտավորյալ ֆոկուսը վատ եմ նկարել, դեմքը չերևա, մարդա էլի): Ասել կուզեմ կանչած են եղել ԿԲ: Այ ինչի համար? էտ էլ դուք գուշակեք» գրառումը՝ դրան կցելով կոտրված մատի լուսանկարը, ինչպես նաև կատարել է «Հաղորդում Հանցագործության մասին, Բյուրոի ախռանիկին գողանանք շորերը հաքնենք մտնենք շեֆի սենյակ սկոչով կապենք ու ամեն ժամը մեկ մի մատը կտրենք, վերջում մենակ էս մատը թողենք, որ Հիշի մեզ:

Էս իմ ազիզ ախպերնա առաջարկել, ասումա հարցերիդ հեշտ լուծման տարբերակ: Հարգելի ոստիկանություն գրեք անձնականով, անուն ազգանուն հասցեն տամ, մեկուսացրեք մեր ախպորը» գրառումը:

Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 2022 թվականի մարտի 16-ի թիվ 52-Ա/ԿԳ-22009 որոշմամբ փաստաբան Արտակ Նորայրի Խաչատրյանի նկատմամբ հարուցվել է **կարգապահական վարույթ՝** «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ, նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետերի, ինչպես նաև** Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք) 2.2.2-րդ *ենթակետի* խախտման հատկանիշներով:**

2022 թվականի մարտի 21-ին կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Քեշիշյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը՝ 2022 թվականի ապրիլի 15-ին ներկայացնելով բացատրություն նշել է, որ Պատասխանողը 2022 թվականի հունվար փետրվար ամիսներին տարբեր օրերի, Բյուրոյի լիազորությունների շրջանակում ԱՊՊԱ ոլորտում իրականացված մի շարք փոփոխությունների դեմ արտահայտվելու պատրվակով սոցիալական ցանցերում (մասնավորապես ֆեյսբուք սոցիալական ցանցում իր կողմից ստեղծված և ադմինիստրատորվող «Տուգանք» անվամբ խմբում «Артак Хачатурофф» օգտատիրոջ անվամբ) տեղադրել են անպարկեշտ մեկնաբանություններ և լուսանկարներ, ինչպես նաև հասարակական վայրերում թույլ է տվել անձնական բնույթի անպարկեշտ արտահայտություններ Բյուրոյի և Բյուրոյի գործադիր տնօրենի նկատմամբ, որոնք լայնորեն տարածվել են նաև զանգվածային լրատվամիջոցներով: Նշված անպարկեշտ մեկնաբանությունները, լուսանկարներն ու արտահայտությունները կապված են եղել բացառապես Բյուրոյի գործադիր

տնօրենի ծառայողական պարտականությունների կատարման հետ, քանի որ դրանց կենտրոնական գաղափարախոսությունը կառուցվել է հանրության մեջ որպես սեռական բնույթի հայհոյանքի ժեստային արտահայտչաձև ընդունված միջնամատի ցուցադրման շուրջ, որի թիրախում եղել է անձամբ Բյուրոյի գործադիր տնօրենը որպես ԱՊՊԱ ոլորտում կատարված համապատասխան փոփոխությունների համար իբր «մեղավոր» անձ:

Բացի այդ, դիմողը նշել է, որ վերոհիշյալ «Տուգանք» անվանք խմբում Պատասխանողը «Արտակ Հաչատրոփփ» օգտատիրոջ անվանմամբ կատարել է հրապարակային գրառում, որը պարունակում է Բյուրոյի գործադիր տնօրենի նկատմամբ բռնություն գործադրելու կոչ:

Դիմողի պնդմամբ, Պատասխանողը՝ հանդիսանալով Բյուրոյի և «ԽԱՉԱՏՈՒՐՈՎ» ԱՊԸ-ի միջև կնքված և գործող իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում լիազորված փաստաբան, «ԽԱՉԱՏՈՒՐՈՎ» ՍՊԸ-ի անունից թվով երեք հայցադիմում է ներկայացրել Բյուրոյի դեմ ՀՀ վարչական, ինչպես նաև Երևանի քաղաքի ընդհանուր իրավասության դատարաններ, (գործերի համարներ՝ ՎԴ/6019/05/21, ՎԴ/10904/05/21, ԵԴ/9418/02/22)՝ ուղղված Բյուրոյի կողմից իր նկատմամբ կիրառված կարգապահական պատասխանատվության միջոցների բողոքարկման, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ Պատասխանողի վերը նշված վարքագիծը միտված է եղել Բյուրոյի և անմիջականորեն դրա գործադիր տնօրենին վարկաբեկելու միջոցով իր օրենքով սահմանված լիազորությունների կատարման հետ կապված զիջումների հարկադրելուն, ճնշում գործադրելու միջոցով նշված դատական վեճերի դրական ելք ապահովելուն, ինչը անթույլատրելի է արհեստավարժ փաստաբանի պարագայում և կասկածի տակ է դնում փաստաբանի և փաստաբանության նկատմամբ պատվիրատուի վստահությունը և հարգանքը:

Դիմողը 2022 թվականի հոկտեմբերի 4-ի Պալատի խորհրդի նիստի ընթացքում ըստ էության հաստատել նախկինում ներկայացրած իր դիրքորոշումը:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Արտակ Խաչատրյանին առաջարկվել է դիմումի վերաբերյալ ներկայացնել գրավոր բացատրություն:

Փաստաբանի կողմից 2022 թվականի մարտի 10-ին ներկայացրել է գրություն, որով հայտնել է, որ դիմումում ներկայացված հանգամանքների մասին դիմողի վերլուծությունները չեն համապատասխանում իրականությանը:

Փաստաբանը հայտնել է, որ դիմումին կցված նյութերից չի բխում, որ իր կողմից որևէ մեկին անձնական վիրավորանք է հասցվել, ավելին ինքն այդպիսի մտադրություն չի ունեցել, իսկ ինչ վերաբերում է նկարում պատկերված իր մատին՝ ապա այն վնասված է եղել և, դրանով նա ցանկացել է ցույց տալ այն հանգամանքը, որ այդ վիճակով Ավտոապահովագրողների բյուրոյի գործողությունների և Կենտրոնական բանկի անգործության հետևանքով ստիպված է եղել օրեր շարունակ անցկացնել Կենտրոնական բանկի և Ավտոապահովագրողների բյուրոյի շենքերի

դիմաց, ինչպես նաև Ոստիկանության բաժանմունքում:

Փաստաբանը հայտնել է նաև, որ թե ֆեյսբուքյան խմբում, թե բյուրոյի և Կենտրոնական բանկի դիմաց նա հանդես չի եկել որպես փաստաբան, այլ ավտոտրանսպորտային միջոցներ օգտագործողների իրավունքների հետ կապված ներկայացրել է իր քաղաքացիական դիրքորոշումը:

Կարգապահական վարույթի շրջանակներում Փաստաբանը 2022 թվականի ապրիլի 17-ի գրությամբ խնդրել է հիմք ընդունել իր կողմից 2022 թվականի մարտի 10-ին ներկայացված բացատրությունը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

2022 թվականի մայիսի 20-ին կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Քեշիշյանը կազմել է եզրակացություն:

2022 թվականի մայիսի 24-ին կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 2022 թվականի հուլիսի 12-ին ժամը՝ 18:30-ին և հոկտեմբերի 4-ին ժամը՝ 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զանքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ «Տուգանք» անվանք խմբում կատարվել են գրառումներ «Артак Хачатурофф» օգտատիրոջ անվամբ էջի միջոցով, որը օգտագործվում է Փաստաբանի կողմից: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի*

կողմից ներկայացված լուսանկարներով և Փաստաբանի բացատրությամբ, որով չի հերքվել այն հանգամանքը, որ լուսանկարներում պատկերված «Արտակ Խաչատուրոֆֆ» օգտատիրոջ անվամբ էջը պատկանում է Փաստաբանին:

2. Ֆեյսբուք սոցիալական ցանցում «Տուգանք» անվանբ խմբում «Արտակ Խաչատուրոֆֆ» օգտատիրոջ անվամբ էջի միջոցով կատարված գրառումները կատարվել են Փաստաբանի կողմից: Մասնավորապես, կատարվել են՝ ***«Դվա վ ադնոմ: Կենտրոնական բանկն է: նկարի մեջ նաև Բյուրոյի տնօրենն է (բայց դիտավորյալ ֆոկուսը վատ եմ նկարել, դեմքը չերևա, մարդա էլի): Ասել կուզեմ կանչած են եղել ԿԲ: Այ ինչի համար? էտ էլ դուք գուշակեք»*** գրառումը՝ դրան կից կոտրված մատի լուսանկարով, ***«Հաղորդում Հանցագործության մասին, Բյուրոի ախռանիկին գողանանք շորերը հաքնենք մտնենք շեֆի սենյակ սկոչով կապենք ու ամեն ժամը մեկ մի մատը կտրենք, վերջում մենակ էս մատը թողենք, որ Հիշի մեզ: Էս իմ ազիզ ախպերնա առաջարկել, ասումա հարցերիդ հեշտ լուծման տարբերակ: Հարգելի ոստիկանություն գրեք անձնականով, անուն ազգանուն հասցեն տամ, մեկուսացրեք մեր ախպորը»*** գրառումը, որոնք իրենց բովանդակությամբ վերաբերում են Ավտոապահովագրողների բյուրոյի և Կենտրոնական բանկի կողմից կատարված գործողություններին, ինչպես նաև Ավտոապահովագրողների բյուրոյի տնօրենին: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված լուսանկարներով և Փաստաբանի բացատրությամբ, որով Փաստաբանը ընդունել է այդ գրառումները կատարելու հանգամանքը, ինչպես նաև հաստատել, որ լուսանկարում պատկերված է իր կոտրված մատը:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արտակ Խաչատրյանը փաստաբան է հանդիսանում 14.07.2012թ., և 2019-2022թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 16.03.2022թ. թիվ 52-Ա/ԿԳ-22009 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ Արտակ Խաչատրյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ*

անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք փաստաբանի կատարած գրառումը և դրան կցած ձեռքի միջնամատի լուսանկարը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Անդրադառնալով նշված հարցադրմանը Խորհուրդն անհրաժեշտ է համարում վկայակոչել հետևյալը.

«Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:*

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների*

խորհրդի կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները:

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ՝ հաշվի առնելով, որ փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը: Իր հերթին Կանոնագրքի 2.2.2 ենթակետով փաստաբանի վրա դրվում է նեգատիվ պարտականություն խուսափելու այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Այս համատեքստում, կարգապահական վարույթ հարուցելու հիմքում դրվել է Ֆեյսբուք սոցիալական ցանցում «Տուգանք» անվանք խմբում՝ Փաստաբանի կողմից օգտագործվող, «Артак Хачатурофф» օգտատիրոջ անվամբ էջի միջոցով կատարված հետևյալ հրապարակումը. ***1)*** *«Դվա վ ադնոմ: Կենտրոնական բանկն է: նկարի մեջ նաև Բյուրոյի տնօրենն է (բայց դիտավորյալ ֆոկուսը վատ եմ նկարել, դեմքը չերևա, մարդա էլի): Ասել կուզեմ կանչած են եղել ԿԲ: Այ ինչի համար? էտ էլ*

դուք գուշակեք», ***2)*** *«Հաղորդում Հանցագործության մասին, Բյուրոի ախոանիկին գողանանք շորերը հաքնենք մտնենք շեֆի սենյակ սկոչով կապենք ու ամեն ժամը մեկ մի մատը կտրենք, վերջում մենակ էս մատը թողենք, որ Հիշի մեզ: Էս իմ ազիզ ախպերնա առաջարկել, ասումա հարցերիդ հեշտ լուծման տարբերակ: Հարգելի ոստիկանություն գրեք անձնականով, անուն ազգանուն հասցեն տամ, մեկուսացրեք մեր ախպորը»* գրառումները, ինչպես նաև 1-ին գրառմանը կից ներկայացված Փաստաբանի միջնամատի լուսանկարի հրապարակումը:

Խորհուրդը, հաստատված համարելով վեր նշված գրառումները անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ Ֆեյսբուք սոցիալական ցանցում «Տուգանք» անվանբ խմբում՝ Փաստաբանի կողմից «Արտակ Հայատրոֆֆ» օգտատիրոջ անվամբ էջի միջոցով կատարված 1-ին գրառմամբ ուղղակիորեն հիշատակվում են Կենտրոնական բանկը, Ավտոապահովագրողների բյուրոն և բյուրոյի տնօրենը, իսկ դրան կից Փաստաբանի միջնամատի պատկերով լուսանկարը, ունի երկակի իմաստ և, բացի միջնամատի պատկերից, այն հանրության մեջ ընկալման տեսանկյունից տարածված է որպես սեռական բնույթի հայհոյանքի ժեստային արտահայտչաձև: Միջնամատ ցույց տալը աշխարհի գրեթե բոլոր երկրներում համարվում է անպարկեշտ և վիրավորական: Տարբեր երկրներում նմանատիպ ժեստիկուլյացիան պատժելի է նաև օրենքով:

Խորհուրդը անհրաժեշտ է համարում ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ Ֆեյսբուք սոցիալական ցանցում «Տուգանք» անվանբ խմբում՝ Փաստաբանի կողմից «Արտակ Հայատրոֆֆ» օգտատիրոջ անվամբ էջի միջոցով հետագայում ևս կատարվել են մի շարք գրառումներ, որտեղ հիշատակվել է Ավտոապահովագրողների բյուրոի տնօրեն Վաղինակ Եղիազարյանի անունն ու ազգանունը, ինչպես նաև հրապարակվել է «ԱՊՊԱ-ն ՉԻ ԹԱՆԿԱՆԱԼՈՒ» գրառմամբ ու այդ ժեստը օգտագործելով, ինչն իր հերթին հասարակությունում ընկալվել կամ կարող էր ընկալվել որպես վերը նշված անպարկեշտ կամ վիրավորական իմաստով:

Այս համատեքստում, անկախ այն հանգամանքից, թե ինչ կարգավիճակով է հանդես գալիս փաստաբանը, Ֆեյսբուք սոցիալական ցանցում նման գրառումներ և երկակի իմաստ կրող ժեստային արտահայտչաձևեր օգտագործելիս, նա առաջին հերթին պետք է հաշվի առնի փաստաբանի այն հանրային բարձր կարգավիճակը, որից ելնելով վերջինիս վրա դրվում են թե իրավական և թե բարոյական մի շարք պարտավորություններ՝ հրապարակախոսական ոլորտում թույլ չտալով այնպիսի վարքագիծ, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Նշածի պայմաններում, Փաստաբանը հրապարակախոսական ոլորտում դրսևորել է իրավական պետությունում իրավապաշտպան գործառույթ

իրականացնող անձին (փաստաբանին) ոչ հարիր վարքագիծ, ինչով կասկածի տակ է դրել փաստաբանի մասնագիտական և հանրային հեղինակությունը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի կողմից խախտվել են Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջները:

******

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 19-րդ հոդվածի վերոնշյալ նորմը փաստաբանի վարքագծի իրավաչափությունը գնահատելիս հղում է անում Կանոնագրքի իրավադրույթներին:

Այսինքն՝ Փաստաբանի կողմից Օրենքի նշյալ իրավադրույթի խախտման հանգամանքն ուղղակիորեն կապվում է Կանոնագրքի շրջանակներում Փաստաբանի վարքագծի գնահատման հետ: Հետևաբար, Կանոնագրքի որևէ դրույթի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի կողմից Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտումը հանգեցնում է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի խախտմանը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը:

Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական

տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով

նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Անդրադառնալով կարգապահական խախտման դրսևորման մեղքի ձևին՝

Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը դրսևորել է համապատասխան վարքագիծը դիտավորությամբ, քանի որ գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝

Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արտակ Նորայրի Խաչատրյանին (արտոնագիր՝ թիվ 1435) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արտակ Նորայրի Խաչատրյանի (արտոնագիր՝ թիվ 1435) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Արտակ Նորայրի Խաչատրյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Լիլիթ Ղազանչյան

04 հոկտեմբերի 2022թ.
թիվ ԿԳ/19-Ա
ք. Երևան